Քէրէկի նոյն ցրուած գաղութին պատմական կեանքի մասին դժբաղդաբար ծանօթութիւն չունինք. բայց կ'երևի որ անոնց մէջ չէին պակսեր ուշիմ և բանիմաց հայեր։ Ժէ. դարու առաջին քառորդին կամ կիսուն կը հանդիպինք Քէրէկցի վաճառականի մը՝ որ կ'ապրէր Նոր Ջուղայի մէջ Գերաք աղա անուամբ։ Ցարութիւն Թ. Տէր Յովհաննեանց իր Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան գործին մէջ (Ա. հատ. էջ 139–140) կը խօսի Գերաք Աղայի մասին և կ'ըսէ թէ ան Յակոբ Աղայի որդին էր և վաճառականութեան մէջ երեւելի էր. առևտուրի զբաղում ունէր Եւրոպայի, Աստրախանի և Գէլանի կողմերը։ Գերաք Աղա երկու որդի ունեցաւ, մէկուն անունը Յակոբ, որմէ ծնաւ Յովհաննէսն, որ Ջուղայի հալածանքներու ժամանակ հեռացաւ և գնաց Սուրաթ, ուր վաճառականութեան ու ազգասիրութեան կողմէն նշանաւոր հանդիսացաւ։ Գերաք Աղայի գործերու մասին լիուլի տեղեկութիւն չունինք. բայց ան՝ որովհետև Ջուղայի Ս. Աստուածածին եկեղեցիին ժողովուրդներէն էր, նորոգել տուաւ նոյն եկեղեցին և ունի հոն յիշատակներ։ Յիշատակութեան արժանի են այն երկու գեղարուեստական նկարները զոր Վենետիկի մէջ նկարել տալով Ս. Աստուածածնի եկեղեցիին ընծայեց, եւ որոնք մինչեւ այժմ նոյն եկեղեցիին հիւսիսային և հարաւային պատերուն վրայ բեւեռուած են։ Նոյն պատկերներուն համար հետեւեալ կերպով կ'արտայայտուի Յ. Տէր Յովհաննեանց (անդ. Բ. հատ. էջ 196), Գերաք Աղա նոյն պատկերները Վենետիկի մէջ ճարտար պատկերահանի մը ձեռքով կտաւի վրայ նկարել տուաւ պատին չափին ու յարմարութեան համաձայն, և բերաւ իրենց տեղերը զետեղեց զանոնք։ Հիւսիսային պատին պատկերն է Հերովդէսի պալատը և Ս. Յովհաննու գլխատումը։ Նոյն պատկերին ներքեւ կը գտնուի պատկերը Գերաք Աղայի որ ձեռնամած աղօթքի կեցած է, եւ ձեռնամածութեան մէջ գրուած է Գերաք։ Հարաւային պատին պատկերն է Յիսուսի քառասնօրեայ գալուստն ի Տաճար, եւ անոր ներքեւը կը գտնուի Գերաք Աղայի կնոջ և անոր երկու զաւակներուն պատկերը։ Ս. Աստուածածին եկեղեցիին վրայ իր կատարած նորոգութեան եւ այլ յիշատակներուն համար Գերաք Աղա յետ վախճանի նոյն եկեղեցիին հարաւային դրան առջեւ թաղուած է եւ տապանաքարն ալ հետեւեալն է.